# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 584-Ա

## ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, 7-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերով և 59-րդ հոդվածով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի Դովեղ բնակավայրում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 11-027-0007-0009 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.01000 հա մակերեսով հողամաս նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր և փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

2. Առանձնացված հողամասի նկատմամբ որպես առանձին գույքային միավոր պետական գրանցում կատարելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 25
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 585-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ, 7-րդ, 31-րդ, 53-րդ և 59-րդ հոդվածներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ (սեփականության վկայական՝ 19042023-11-0040), 11-016-0201-0036 կադաստրային ծածկագրով, 0.02624 հա մակերսով հողամասը միավորել (սեփականության վկայական՝ 19042023-11-0029), 11-016-0201-0038 կադաստրային ծածկագրով 0.001078 հա մակերեսով հողամասի հետ:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ միավորված 0.03702 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես մեկ գույքային միավոր պետական գրանցում ստանալու նպատակով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԱՌԱՔԱՅԱՆ**

2023 թ. ապրիլի 26
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 586-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Նորոշումը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Նորոշման 4-րդ բաժնի 33-րդ, 34-րդ, 34.2-րդ 35-րդ և 35.1 կետերով, հաշվի առնելով, որ Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող Այրում քաղաքի Ս.Շահումյան փողոց թիվ 3 շենք հասցեում գտնվող 0.12 հա մակերեսով հողամասում առկա անավարտ բնակելի շենքի վրա կատարված բոլոր փոփոխություններ և ինքնակամ կառուցված կառույցները չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի Ս.Շահումյան փողոց թիվ 3 շենք հասցեում 0.12 հա մակերեսով հողամասում (11-012-0117-0002 կադաստրային ծածկագրիր, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) գտնվող բնակելի շենքի վրա կատարված բոլոր ինքնակամ փոփոխությունները՝ ինքնակամ կառուցված աստիճանահարթակները ընդհանուր՝ 66.2 ք.մ մակերեսով և տեղադրված պատուհանները ՝ (հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանք՝ 2023DHNVUP):

2.Ճանաչել Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի Ս.Շահումյան փողոց թիվ 3 շենք հասցեում՝0.12 հա մակերեսով հողամասում (11-012-0117-0002 կադաստրային ծածկագրիր, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) գտնվող, բնակելի շենքի վրա կատարված բոլոր ինքնակամ փոփոխությունները՝ ինքնակամ կառուցված աստիճանահարթակաները ընդհանուր՝ 66.2 ք.մ մակերեսով և տեղադրված պատուհանները Նոյեմբերյան համայնքի սեփականության իրավունքը՝ սպասարկման համար նախատեսված 0,12 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամասով:

3. Տրամադրվող հողամասի մակերեսը և սահմանները՝ընդունվում են սույն որոշմանը կից ներկայացված հողամասի հատակագծի մակերեսով և սահմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 26
ք.Նոյեմբերյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mtä.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

26 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 587-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ԱՌԿԱ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի՝ 11-012-0117-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի առկա ՝ համայնք Նոյեմբերյան, ք. Այրում Շահումյան 1 Ա անավարտ բնակելի շենք հասցեն փոփոխել և տալ նոր հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, ք. Այրում Ս.Շահումյան փողոց թիվ 3 շենք հասցեում, փոստային դասիչ 4102:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԲԱՐՅԱՆ**

2023 թ. ապրիլի 26
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 588-Ա

### ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, 7-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերով և 59-րդ հոդվածով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն բնակավայրում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 11-016-0183-0013 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.25105 հա մակերեսով հողամաս և այդ հողամասի նկատմամբ, որպես առանձին գույքային միավոր պետական գրանցման ներկայացնելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 26
ք. Նոյեմբերյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 589-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Դեբեդավան բնակավայրի՝ 11-024-0012-0021 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ հասցե գրանցելով համայնք Նոյեմբերյան, գ. Դեբեդավան, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 6 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ 4108:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. ապրիլի 27
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 590-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի գ.Դովեղ 11-027-0007-0009 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0.01000 հա մակերեսով հողամասին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, գ.Դովեղ 7 փողոց, 4/1 հողամաս հասցեում, փոստային դասիչ 4101:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. ապրիլի 27
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 591-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 17. 09. 2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ գյուղի բնակիչ Ղուկաս Սամվելի Հարությունյանի 27.04.2023 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-043-0106-0104 ծածկագրով 2.0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկներ՝ կորիզավոր:

2. Հողամասը պետական գրանցման ներկայացնելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 592-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի՝ 11-004-0039-0001 կադաստրային ծածկագրով 0.00079 հա մակերեսով հողամասին տալ հասցե գրանցելով համայնք Նոյեմբերյան, ք.Նոյեմբերյան Դպրոցականների փողոց, 44/12 գեղեցկության սրահ հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 593-Ա

## ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 5-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող 11-004-0039-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.00584 հա մակերեսով հողամաս և որպես առանձին գույքային միավոր պետական գրանցման ներկայացնելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 594-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Նորոշումը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Նորոշման 4-րդ բաժնի 33-րդ, 34-րդ, 34.2-րդ 35-րդ և 35.1 կետերով, հաշվի առնելով, որ Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Դպրոցականների փողոց թիվ 44/12 գեղեցկության սրահ հասցեում գտնվող ընդհանուր՝ 0.00975 հա մակերեսով հողամասում առկա ինքնակամ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հաշվի առնելով Սեդա Հայկազի Ամիրաղյանի կողմից տրված 12.04.2023 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Դպրոցականների փողոց թիվ 44/12 գեղեցկության սրահ հասցեում, 0.00079 հա մակերեսով հողամասի (11-004-0039-0001 կադաստրային ծածկագրով նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) վրա Սեդա Հայկազի Ամիրաղյանի կողմից ինքնակամ կառուցված 7.89 քմ արտաքին մակերեսով կառույցը՝ գեղեցկության սրահ (հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանք՝ 2022FD6ZYE):

2. Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Դպրոցականների փողոց թիվ 44/12 գեղեցկության սրահ հասցեում Սեդա Հայկազի Ամիրաղյանի կողմից ինքնակամ կառուցված՝ 7.89 քմ արտաքին մակերեսով կառույցի՝ գեղեցկության սրահի նկատմամբ ճանաչել Նոյեմբերյան համայնքի սեփականության իրավունքը՝ սպասարկման համար

նախատեսված ընդհանուր՝ 0.00079 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամասը:.

3. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ Միեր Ավագյանին սույն որոշմամբ օրինականացված կառույցի՝ գեղեցկության սրահ, նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկությամբ դիմել ինքնակամ կառույցն իրականացրած Սեդա Հայկազի Ամիրաղյանի՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով կառույցը՝ 86000 ՀՀ դրամ արժեքով (7.89 x 10881) և նրա սպասարկման համար անհրաժեշտ 7.9 քմ մակերեսով հողամասը՝ 9650 ՀՀ դրամ արժեքով (7.9 x 1221) ձեռք բերելու համար:

4. Տրամադրվող հողամասի մակերեսը և սահմանները ընդունվում են սույն որոշմանը կից ներկայացված հողամասի հատակագծի մակերեսով և սահմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 595-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղի՝ 11-041-0067-0001 կադաստրային ծածկագրով 0.03643 հա մակերեսով հողամասին տալ հասցե գրանցելով համայնք Նոյեմբերյան, գյուղ Կողբ 8 -րդ փողոց, 71/4 հողամաս հասցեում, փոստային դասիչ 4110:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱՂԱԲԱՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք. Նոյեմբերյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 596-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշումը, Նոյեմբերյան համայնքի ավագանու 06/12/2022 թվականի թիվ 231-Ն որոշման 1-ին կետը և հաշվի առնելով Նարեկ Գագիկի Գիշյանի 05.04.2023 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նարեկ Գագիկի Գիշյանին 04.05.2022 թվականին տրված N 04 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար տալ շինարարության թույլտվություն ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի քաղաք Նոյեմբերյան Պուշկինի փողոց թիվ 7/1 հասցեում առանձնատանը կից ավտոտնակի կառուցման համար 8 ամիս ժամկետով:

2. Նարեկ Գագիկի Գիշյանը պարտավոր է Նոյեմբերյանի համայնքապետարանի 900395101075 հաշվեհամարին մուծել 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. ապրիլի 27
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023թվականի N 597-Ա

### ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնից 03.04.2023 թվականին ուղարկված № 87/3-9-809 գրության հիման վրա, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս բնակավայրի բնակիչ, Հակոբ Սամվելի Ներսեսյանի կողմից ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելու առթիվ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 07.04.2023 թվականի 462-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 21.04.2023 թվականին, ժամը 10-00-ին: Վարչական վարույթի մասնակից՝ Հ. Ներսեսյանը պատշաճ ծանուցվել և ներկայացել է լսումներին, իսկ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի պետը լսումների վերաբերյալ թեև պատշաճ ծանուցվել է, սակայն լսումներին ոստիկանության ներկայացուցիչը չի ներկայացել և լսումներն անց են կացվել ոստիկանության ներկայացուցչի բացակայության պայմաններում:

2. Ակտի ընդունման փաստական հիմքերը.

վարչական վարույթի նյութերում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում, մասնավորապես՝ ոստիկանության ներկայացուցչի կողմից 03.04.2023 թվականին կազմված թիվ 63 արձանագրությունում, «Արձանագրել է» վերտառության տակ, առկա է ոստիկանության ներկայացուցչի կողմից արված ձեռագիր գրառում այն մասին, որ Հակոբ Ներսեսյանը 03.04.2023 թվականին, ժամը 10:40-ին «Գվարգին» հանրախանութի մոտ՝ ոչ սահմանված վայրում զբաղվել է առևտրով:

Բացի դա, արձանագրությունում, Հ. Ներսեսյանի ստորագրությամբ առկա է գրառում այն մասին, որ վերջինս չի իմացել, որ նման վայրում առևտուր կատարելն արգելվում է:

Լսումների ժամանակ Հակոբ Սամվելի Ներսեսյանը պնդել է, որ իր ավտոմեքենայով, առանց որևէ իրավախախտման, վաճառելու նպատակով ձուկ է տեղափոխել ք. Նոյեմբերյան: Չի իմացել, որ ոչ սահմանված վայրում արգելվում է զբաղվել առևտրով:

Առևտրով զբաղվելուն նախապատրաստվելիս բացել է ավտոմեքենայի բեռնախցիկը, որի ժամանակ, անմիջապես իրեն է մոտեցել ոստիկանության աշխատակիցը և կազմել արձանագրություն, որից տեղեկացել է, որ արգելվում է նշված վայրում զբաղվել առևտրով և առանց առևտրով զբաղվելու, արձանագրությունը կազմելուց հետո անմիջապես հեռացել է տարածքից, այսինքն փաստացի ոչ սահմանված վայրում առևտրով չի զբաղվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հակոբ Սամադի Ներսեսյանի կողմից 03.04.2023 թվականին, ժամը 10:40-ի սահմաններում Նոյեմբերյան քաղաքում, «Գվարգին» հանրախանութի մոտ առևտրով զբաղվելու հանգամանքը հիմնավորող ապացույցներ չկան:

3. Ակտի ընդունման իրավական հիմքերը.

նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 07.04.2023 թվականի 462-Ա որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի պետի 03.04.2023 թվականի №87/3-9-809 գրության հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի ապրիլի 21-ին հրավիրվել է լսում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն վարույթի մասնակիցները պատշաճ ծանուցվել են վարչական վարույթի անցկացման վայրի և ժամի մասին, Հակոբ Սամադի Ներսեսյանը ներկայացել է լսումներին, իսկ ոստիկանության ներկայացուցիչը չի ներկայացել վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն.

վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ

դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի, բ) կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60 հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հակոբ Սամադի Ներսեսյանի վերաբերյալ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի 03.04.2023 թվականի № 87/3-9-809 գրության հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդ օրվանից, կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և (կամ) համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 598-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնից 27.03.2023 թվականին ուղարկված № 87/3-3-709 գրության հիման վրա, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի բնակիչ, Արմեն Սարիբեկի Սահակյանի կողմից ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելու առթիվ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 07.04.2023 թվականի 464-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 21.04.2023 թվականին, ժամը 10-00-ին: Վարչական վարույթի մասնակցները՝ Ա. Սահակյանը և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի պետը լսումների վերաբերյալ թեև պատշաճ ծանուցվել են, սակայն լսումներին չեն ներկայացել և լսումներն անց են կացվել Ա. Սահակյանի և ոստիկանության ներկայացուցչի բացակայության պայմաններում:

2. Ակտի ընդունման փաստական հիմքերը.

վարչական վարույթի նյութերում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում, մասնավորապես՝ ոստիկանության ներկայացուցչի կողմից 26.03.2023 թվականին կազմված թիվ 59 արձանագրությունում, «Արձանագրել է» վերտառության տակ, առկա է ոստիկանության ներկայացուցչի կողմից արված ձեռագիր գրառում այն մասին, որ Արմեն Սահակյանը 26.03.2023 թվականին ժամը 14:20-ին Նոյեմբերյան քաղաքի կենտրոնական մասում գտնվող օղակաձև շրջադարձի մոտ՝ ոչ սահմանված վայրում զբաղվել է առևտրով:

Նույն արձանագրությունում առկա է գրառում այն մասին, որ Ա. Սահակյանն իմանալով հանդերձ կանգնել է Նոյեմբերյան քաղաքի կենտրոնական հատվածում՝ օղակաձև շրջադարձի մոտ և գյուղատնտեսական ապրանք է վաճառել: Հատկանշական է, որ Ա. Սահակյանը հրաժարվել է ստորագրել արձանագրությունում, որի վերաբերյալ Արձանագրությունում առկա է համապատասխան գրառում:

11.04.2023 թվականին Արմեն Սարիբեկի Սահակյանի կողմից ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարին գրավոր դիմում է ներկայացվել այն մասին, որ անձնական խնդիրների բերումով լսումներին չի կարող ներկայանալ: Նշել է նաև, որ իրականում ոստիկանության աշխատակցի կողմից նշված հանգամանքներում՝ ոչ սահմանված վայրում առևտուր չի իրականացրել, այլ իր ավտոմեքենայով կարտոֆիլ տեղափոխելիս, ք. Նոյեմբերյանի կենտրոնական հատվածում կանգնեցրել է մեքենայի ընթացքը, լվացվելու նպատակով բեռնախցիկից ջուր վերցնելու համար բացել է բեռնախցիկը, կշեռքը դրել գետնին, որպեսզի չընկնի, որի ժամանակ մոտեցել է ոստիկանության աշխատակիցը և ոչ սահմանված վայրում առևտուր կատարելու վերաբերյալ կազմել է արձանագրություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արմեն Սարիբեկի Սահակյանի կողմից 26.03.2023 թվականին, ժամը 14:20-ի սահմաններում Նոյեմբերյան քաղաքի կենտրոնական հատվածում՝ օղակաձև շրջադարձի մոտ գյուղատնտեսական ապրանք վաճառելու հանգամանքը հիմնավորող ապացույցներ չկան:

3. Ակտի ընդունման իրավական հիմքերը.

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 07.04.2023 թվականի 464-Ա որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի պետի 27.03.2023 թվականի №87/3-3-709 գրության հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի ապրիլի 21-ին հրավիրվել է լսում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն վարույթի մասնակիցները պատշաճ ծանուցվել են վարչական վարույթի անցկացման վայրի և ժամի մասին, սակայն չեն ներկայացել վարույթի լսմանը, չեն ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն.

վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի, բ) կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60 հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմեն Սարիբեկի Սահակյանի վերաբերյալ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի 27.03.2023 թվականի № 87/3-3-709 գրության հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդ օրվանից, կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և (կամ) համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 599-Ա

### ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնից 04.04.2023 թվականին ուղարկված № 87/3-3-820 գրության հիման վրա, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի բնակիչ, Ավագ Բորիսի Ավագյանի կողմից ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելու առթիվ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 07.04.2023 թվականի 463-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 21.04.2023 թվականին, ժամը 10-00-ին: Վարչական վարույթի մասնակից Ա. Ավագյանը պատշաճ ծանուցվել և ներկայացել է լսումներին, իսկ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի պետը լսումների վերաբերյալ թեև պատշաճ ծանուցվել է, սակայն ոստիկանության ներկայացուցիչը լսումներին չի ներկայացել և լսումներն անց են կացվել ոստիկանության ներկայացուցչի բացակայության պայմաններում:

2. Ակտի ընդունման փաստական հիմքերը.

Վարչական վարույթի նյութերում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում, մասնավորապես՝ ոստիկանության ներկայացուցչի կողմից 04.04.2023 թվականին կազմված թիվ 64 արձանագրությունում, «Արձանագրել է» վերտառության տակ, առկա է ոստիկանության ներկայացուցչի կողմից արված ձեռագիր գրառում այն մասին, որ 04.04.2023 թվականին, ժամը 10:55-ի սահմաններում Նոյեմբերյան քաղաքի կենտրոնական մասում, «Գվարգին» հանրախանութի մոտ, ոչ սահմանված վայրում զբաղվել է ձկան վաճառքով:

Բացի դա, արձանագրությունում Ա. Ավագյանի ստորագրությամբ առկա է գրառում, որ 04.04.2023 թվականին ժամը 10:55-ի սահմաններում Նոյեմբերյան քաղաքի կենտրոնական հատվածում ոչ սահմանված վայրում չի զբաղվել ձկան առևտրով և չի իմացել, որ նշված վայրում վաճառելն արգելվում է:

Լսումների ժամանակ Ավագ Բորիսի Ավագյանը պնդել է, որ իր ավտոմեքենայով, առանց որևէ իրավախախտման, վաճառելու նպատակով ձուկ է տեղափոխել ք. Նոյեմբերյան: Չի իմացել, որ ոչ սահմանված վայրում արգելվում է զբաղվել առևտրով: Առևտրով զբաղվելուն նախապատրաստվելիս բացել է ավտոմեքենայի բեռնախցիկը, որի ժամանակ, անմիջապես իրեն է մոտեցել ոստիկանության աշխատակիցը և կազմել արձանագրություն, որից տեղեկացել է, որ արգելվում է նշված վայրում զբաղվել առևտրով և առանց առևտրով զբաղվելու, արձանագրությունը կազմելուց հետո անմիջապես հեռացել է տարածքից և փաստացի ոչ սահմանված վայրում առևտրով չի զբաղվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ավագ Բորիսի Ավագյանի կողմից 04.04.2023 թվականին, ժամը 10:55-ի սահմաններում Նոյեմբերյան քաղաքում, «Գվարգին» հանրախանութի մոտ առևտրով զբաղվելու հանգամանքը հիմնավորող ապացույցներ չկան:

3. Ակտի ընդունման իրավական հիմքերը.

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 07.04.2023 թվականի 463-Ա որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի պետի 03.04.2023 թվականի №87/3-9-809 գրության հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի ապրիլի 21-ին հրավիրվել է լսում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն վարույթի մասնակիցները պատշաճ ծանուցվել են վարչական վարույթի անցկացման վայրի և ժամի մասին, Ավագ Բորիսի Ավագյանը ներկայացել է լսումներին, իսկ ոստիկանության ներկայացուցիչը չի ներկայացել վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն.

վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի, բ) կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60 հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ավագ Բորիսի Ավագյանի վերաբերյալ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի 04.04.2023 թվականի № 87/3-3-820 գրության հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդ օրվանից, կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և (կամ) համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 600-Ա

### ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնից 23.03.2023թ-ին ուղարկված №  87/3-9-674 գրության հիման վրա, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կողբ բնակավայրի բնակիչ, Սարգիս Արթուրի Ջաղինյանի կողմից ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելու առթիվ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 07.04.2023թ-ի 465-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 21.04.2023թ-ին, ժամը 10-00-ին: Վարչական վարույթի մասնակից՝ Ս. Ջաղինյանը պատշաճ ծանուցվել և ներկայացել է լսումներին, իսկ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի պետը լսումների վերաբերյալ թեև պատշաճ ծանուցվել է, սակայն ոստիկանության ներկայացուցիչը լսումներին չի ներկայացել և լսումներն անց են կացվել ոստիկանության ներկայացուցչի բացակայության պայմաններում:

2. Ակտի ընդունման փաստական հիմքերը.

Վարչական վարույթի նյութերում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում, մասնավորապես՝ ոստիկանության ներկայացուցչի կողմից 22.03.2023թ-ին կազմված թիվ 52 արձանագրությունում, «Արձանագրել է» վերտառության տակ, առկա է ոստիկանության ներկայացուցչի կողմից արված ձեռագիր գրառում այն մասին, որ 22.03.2023թ-ին, ժամը 11:00-ին Նոյեմբերյան քաղաքի Նոյեմբերի 29-ի փողոցում, ոչ սահմանված վայրում զբաղվել է առևտրով:

Նույն արձանագրության «Իրավախախտում կատարած անձի համառոտ բացատրությունը» վերտառության ներքը առկա է ձեռագիր գրառում այն մասին, որ Արթուր Ջաղինյանը հրաժարվել է բացատրություն տալուց և ստորագրելուց:

Լսումների ժամանակ Սարգիս Արթուրի Ջաղինյանը պնդել է, որ ոստիկանության աշխատակցի կողմից արձանագրությունը կազմելու վայրին կից՝ «Սամ սուպերմարկետ»-ի ներսում, իր մայրը վաճառակետում զբաղվում է բանջարեղենի

վաճառքով և տվյալ պահին ինքն իր ավտոմեքենայով մոտեցրել է բանջարեղենը՝ վաճառակետ տեղափոխելու նպատակով, որի ժամանակ ոստիկանության աշխատակցին թվացել է, թե՛ զբաղվում է առևտրով և կազմել է համապատասխան արձանագրություն, որը ստորագրելուց ինքը հրաժարվել է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Սարգիս Արթուրի Ջաղինյանի կողմից 22.03.2023թ-ին, ժամը 11:00-ի սահմաններում Նոյեմբերյան քաղաքի Նոյեմբերի 29-ի փողոցում առևտրով զբաղվելու փաստը հիմնավորող ապացույցներ չկան:

3. Ակտի ընդունման իրավական հիմքերը.

նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 07.04.2023թ-ի 465-Ա որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի պետի 23.03.2023թ-ի №87/3-9-674 գրության հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023թ-ի ապրիլի 21-ին հրավիրվել է լսում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն վարույթի մասնակիցները պատշաճ ծանուցվել են վարչական վարույթի անցկացման վայրի և ժամի մասին, Սարգիս Արթուրի Ջաղինյանը ներկայացել է լսումներին, իսկ ոստիկանության ներկայացուցիչը չի ներկայացել վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն.

վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով

նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի, բ) կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60 հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սարգիս Արթուրի Ջաղինյանի վերաբերյալ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի 23.03.2023թ-ի№ 87/3-9-674 գրության հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Սույնորոշումնուժիմեջէմտնումկողմերին իրազեկելուն հաջորդ օրվանից, կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և (կամ) համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՂԴԵԲՅԱՆ

2023 թ. ապրիլի 27
ք.Նոյեմբերյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 601-Ա

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 10 հունիսի 2008 թվականի օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 12 օգոստոսի 2010 թվականի թիվ 1004-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հողամասը չի մտնում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն առաջացնում սերվիտուտ և չեն հակասում քաղաքաշինական նորմերին, ինչպես նաև հիմք ընդունելով Մերուժան Արամայիսի Անանյանի 14.04.2023 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի գյուղ Կողբ, 37-րդ փողոց, 28 բնակելի տուն հասցեում (ծածկագիր 11-041-0120-0010) ժառանգության իրավունքով Մերուժան Արամայիսի Անանյանին (ծնված 03.06.1974 թվականին), պատկանող 0.18 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) վրա կառուցված ներքին մակերեսով բնակելի ընդհանուր 378.790 քմ շինությունների նկատմամբ ճանաչել Մերուժան Արամայիսի Անանյանի (ծնված 03.06.1974 թվականին) սեփականության իրավունքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. ապրիլի 27
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2023 թվականի N 602-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

